…պրոցներ, իսկ այժմ նա ունի տասից աւելի …րժապետական և բաւականին էլ ազգային դըպ…ցներ։ Բայց ինչ գանազանութիւն կայ մեր և …ուսաստանի գիւղերի մէջ թէ ուսուցման և …մ թէ ուրիշ կողմանէ։ Ի վերջոյ ձեզ օրինակ …ինի Ղալախայ ու Գեղի գիւղերն, որտեղ նիկայ …ամանակաւս ծաղկած դրութեան մէջ են ու…մնարաններ։ Պ. Մանկավարժ մեզ դուք …յժմնում էք, որ գիւղերում երեխայք այնպէս այ…ելին ուսումնարանը, ինչպէս և քաղաքներում, …յդ անկարելի բան է և մի այդպիսի օրինակ դեռ …ս չենք տեսնում։ Մինչև անգամ Պրուսիայում, …յդ լուսաւորութեան կենդրոնում, ուր վաղուց …ուցանված է պարտադիր ուսումն, Տէրութիւնն … հարկադրում գիւղացի ծնողաց ուղարկել ուսում…արան իւր որդւոց այն ժամանակ, երբ վերջին…երն պէտք է օգնեն նորանց դաշտային գործերում։ …յս պատճառով այստեղ, ինչպէս և ամէն տեղե…ումն էլ, դասատուութիւնը սկսվում է այն ժա…մանակից, երբ երեխայքը ամենևին ազատ են դաշ…ային գործերից և շարունակվում է մինչև կրկին …ործերի ժամանակը գալը։ Բացի սորանից ուրիշ …նարք դեռ ևս չգտնված։ Երևում է, որ Ն. Ի. ամե…ևին անծանօթ է գիւղային դպրոցների դրութեան …ետ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում, …թէ ոչ մեք համոզված ենք, որ նա չէր ասելու թէ …րեխայք ազատ ժամանակ չունենալով չէին այ…ելում ուսումնարանը։ 2) Պ. Մանկավարժն կա…ծենում է, որ գիւղերում լինի ոչ թէ մէկ, այլ և …րկու ուսուցիչ ամէն մէկին երկու հարիւր րուբլի …ռճիկով։ Այդ էլ առաջի անգամ դժուար է մեր գիւղացւոց համար, որովհետև նորանք չգիտեն, …նչպիսի պաշտօնեայ կայ ուսումնարանն, որի հա…մար պէտք է ծախս անեն չորս հարիւր րուբլի …միայն դեռ ուսուցիչներ վարձելոյ համար։ Պ. Ման…կավարժ! թէպէտ մի փոքր էլ հեռու էք Շամա…խուց, բայց կարծեմ չէք մոռացել նորա հոգևոր-…ազգային դպրոցն, որում մի ժամանակ Դուք ևս …ւսուցիչ էիք և առէք խնդրեմ, մեզ այդ դըպ…ոցի ուսուցիչներից ամէն մէկն ստանում էր եր…կու հարիւր րուբլի… Դուք ինքներդ գիւղացի …ինելով լաւ գիտէք որ գիւղերում փողն շատ …անգ բան է։ Գիւղացին ամբողջ տարի կարող է …ալ ուսուցչին ցորէն, գարի, իւղ, գինի և այլն …5—10 րուբլի։ Մի և նոյն ժամանակ նա յանձն …ի առնիլ տալ ուսուցչին ամսական 50 կոպ. ևս։ Այդ շատ հասկանալի բան է, որովհետև գիւղացոյ …ւչքին չէ երևում և կամ ամենևին փող էլ չէ հա…մարում, երբ նա իւր քանի մի թաղար *) ցորէ…նից տալիս է ուսուցչին երեք և չորս փութ և …քանի մի կարաս գինիից երկու և երեք ման **). Այս պատճառաւ մեր գիւղերում ուսուցիչն պէտք է ստանայ իւր ռոճիկն գլխաւորապէս գիւղացու …րքերով, նմանապէս ծըխ փայտով և բնակարա…նով։ Մեր գիւղացւոց էլ չէ կարելի ամենևին …մեղադրել սառնութեան մէջ ուսումն. «Աղայ …մեծ քունը, ուկոյն ինձ, ինչ որ անում ես արա, …ինչ որ լինի քեզ իմ տղին գիրածանաչ անես» ա…սում է պարզամիտ մեր գիւղացին, որի մօտ կամե…նում է իւր տղային ծառայութեան տալ։

3) Ուսուցչութեան պաշտօնն մի ժառանգաւոր բան չէ։ Առաջուց Դուք Շամախում էիք ուսուցիչ, այժմ Բաքու էք, միւս տարի կարող էք լինել ուրիշ տեղ, ի հարկէ որտեղ ռոճիկն շատ…

Շամախուց հոգևոր-ազգային դպրոցն այնու ամենայնիւ շարունակում է իւր գոյութիւն, չնայելով որ Դուք այնտեղ էլ ուսուցիչ չէք, ուրեմն փինաշեանցին Բաքու որ հրաւիրեցին, սորանով չէր կարող փակվել ուսումնարանն, որտեղ նորա տեղ կարելի էր ուրիշին նշանակել։ Պ. Մանկավարժ! մեզ հենց այսպիսի դէպքերում չէ ասած առածաց առակը «բիրի օլմասայ, բիրի տիրիլմասը»։ Ի վերջոյ ես թոյլ եմ տալիս ինձ առել յիշատակ խօսքերը. ամէն մի անհատ իրաւունք ունի պաշտպանել թէ իւր և կամ թէ բարեկամաց պատիւն և արժանաւորութիւնը, որոնց վրայ յարձակվում են ուրիշներն, ի մտի ունենալով խայտառակել նորանց հասարակութեան առջև։ Բայց և այն անհասար, կամենալով յարձակվողի սուտն ցոյց տալ (խելապէս խոսելով, որ նոքա սուտ են) չպէտք է գրաւի ամենևին և գործ դնի անհարկի հնարքըներ, մի խօսքով չպէտք է ոչ մի ժամանակ մոռանում անձի համար զոհ բերել ընդհանուր-մարդկային խնդիրներ. ուսումնարանն և վանահայրն միմեանցից հեռու մնացեր են։ Իսկ ինչ որ վերաբերում է վանահօրն, որին պ. Ղուկասեանցը մեղադրում է, իբր միակ պատճառ ուսումնարանն փակվելուն, այդ թողնում ենք մեր Շամախեցւոց թէ ծերերի և թէ երիտասարդների դատողութեան, որոնք շատ լաւ գիտեն մեր հիւրընկալ Հայր սուրբին…

Պ. Կաճկաճեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՍՊԱՆԻԱ

Հասարակապետութիւնը հաստատուած է և արդէն ընդունուած մի քանի տէրութիւններից, միւսներն էլ անտարակոյս կ'ընդունեն նորան այս օրերս։ Ամէդէյ թագաւորը գնացել է Լիսաբոն և էնտեղից կը վերադառնայ Հռոմ։ Այսպէս ուրեմն Իսպանիան մնացել է առանց հովւի, և պէտք է ինքը տնօրինէ իւր վիճակը։ Ճշմարիտ է, կան նոր, կամ աւելի լաւ է ասել հին, հովիւներ, որոնք առաջարկում են նորան իւրեանց ծառայութիւնը։ „Նազելի Իսպանիա, ասում են նոքա, մենք քեզ շատ, շատ ենք սիրում. մենք լաւն ենք ուզում հաւատամ մեզ։ Ցանկանուի՛ր մեզ. թող տուր ինձ (ասում է նրանցից ամէն մինը) քո գլխին նստել,—և դու կ'ազատուես քեզ կառավարելու անտանելի լծից“։ Բայց նազելի Իսպանիան չի լսում նրանց,—և ո՞ր մէկին լսի, լաւ է, եթէ մէկը լինէր, բայց նորա երեք հոգի են Դոն-Կարլոսը քաշում է մի կողմը, Ալֆոնսը (Իզաբելլայի որդին)—միւս կողմը, Մոնպանսէ դուքսը—մի այլ կողմը. բացի դրանցից մէջտեղը կան և մի քանի խնդրատուներ (օրինակ) որոնք կրկին առաջարկում են Հօհենցոլլերնեան իշխանազնին (Պրուսաց թագաւորի ազգականին)։ Չէ, կացէք, մտածում է նա, եթէ այդ պարոններից ամէն մինը սիրում է ինձ, հապա ես ինքս էլ աւելի եմ սիրում ինձ. եթէ դրանցից ամէն մինը իմ լաւն է ուզում, մինչ ես ինքս չեմ ուզում իմ լաւը։ Եւ եթէ նրանցից ամէն մինը յանձն է առնում ինձ լաւ, երջանիկ առնել,—մինչ ես ինքս չեմ կարող այդ անել։ Ես հօ մի մարդ չեմ, ես—ամբողջ երկիր եմ, ամբողջ ազգ եմ։ Ինքս ինձ աւելի լաւ եմ ճանաչում, քան թէ մի ուրիշը. ես ինքս ամենից լաւ եմ զգում, թէ ինչ է ինձ պակաս, ինչ է աւելի.. Չէ, յարգելի պարոններ, շնորհակալ եմ ձեր ծառայութիւնների համար, այս անգամ մենք կ'աշխատենք առանց ձեզ կառավարուել, թէ չէ, ո՞վ գիտէ, 2—3 տարից յետոյ դուք կը հեռանաք այստեղից, կամ, եթէ ինքներդ չէք ուզենայ այդ, հարկաւոր կը լինի ձեզ դուրս անել այստեղից։ Իսկ յետոյ նոր հոգսեր կը գան. ո՞ւմ ընտրել, ինչպէս ընտրել։ Այսպէս դատելով Իսպանիան վճռեց հասարակապետութիւն հաստատել իւր մէջ։ Առած—ու կատարած. հասարակապետութիւնը հիմնուած է։

ԹԻՒՐՔԻԱ

Թիւրքիայում պայմանագրի զօրութեամբ այժմս թոյլ կը տրվի ռուսաց հպատակներին հողեր գնելու և կալուածներ ունենալու։ Նոյնը իրաւունքը շուտով կը տրվի և այլ պետութեանց հպատակներին։ Գերմանական դեսպանը նորերումս գնել է մի մեծ կտոր հող Բերայում։

Եգիպտոսի փոխարքան յայտնեց թէ մայիսին պիտի այցելութիւն անէ Սուլթանին Կ. Պօլսի մէջ։

„Kolnische Zeitung“ լրագիրը հաղորդում է, որ նորնշանակված Թուրքաց դեսպանը Պարսկաստանի մէջ Մուսիֆ էֆենդի այս օրերս ուղևորվել է դէպի Թեհրան հետեւեալ յանձնարարութեամբ՝ Ռուսաստանի և Անգլիայի միջնորդութեամբ ձեւակերպված նախագծով Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ պիտի ճշտութեամբ որոշվին սահմանները։

ԳԵՐՄԱՆԻԱ

Որքան փոխվեցաւ վերջին ժամանակներս Պրուսիայի ոգին, ցոյց է տալիս առաջադէմ կուսակցութեան ընտրողական շրջաբերականը։ Նրա մէջ ասված է որ առաջադէմ կուսակցութիւնը ճանաչեց անհրաժեշտութիւնը միանալ մնացած ազատամիտ կուսակցութիւնների հետ և պաշտպանել տէրութիւնը հոգևորականների դէմ պատերազմի մէջ, որ օրից օր մարդկային կրթութեան գործի համար պատերազմի նշանակութիւն է ստանում։ Այդ երևոյթի առիթով գերմանական „Norddeutsche Allgemeine Zeitung“ լրագիրը ասում է՝ առաջադէմ կուսակցութեան շրջաբերականի այդ խօսքերը գրաւեցին ոչ թէ միայն ազատամիտ բայց և սահմանադրական կուսակցութեան համակրութիւնը։ Մանր, չնչին տարաձայնութիւններ սահմանադրական խնդիրների մէջ մի կողմ թողած, ամենքը հասկացան, որ այժմ ամէնքի նպատակը մի է՝ ազգային բարեկեցութիւնը։ Բոլոր կուսակցութիւնները միացան մի մարմնի մէջ, որ միասին պատերազմեն ընդհանուր թշնամու դէմ, որ ամեն խնդիրներում արգելք էր լինում ազգային ազատ զարգացմանը, մանաւանդ այն խնդիրներում, որտեղ ազգը աչքի առաջն ունէր ճշմարիտ ընդհանուր մարդկային և կրթողական օգուտները։

ԶՄԻՒՌՆԻՈՅ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Օսմանեան կայսրութեան այս գլխաւոր քաղաքին Հայ բնակչաց թիւր 7000 հոգիի կը հասնի և ունին գրեթէ 1200 տուն, մի հոյակապ վարժարան վասն մանկանց և մի հոյակապ վարժարան վասն աղջկանց։ Այս ազգային հաստատութեանց առաջինը Մեսրոպեան ուսումնարան կը կոչուի, ուր 500ի չափ աշակերտք կը յաճախեն. երկրորդին անունը Հռիփսիմեանց վարժարան է և 250ի չափ աշակերտուհի ունի։ Բաց յայսցանէ փոքրիկ վարժարան մի ևս կայ Սահակեան դպրոց անուամբ, ուր 50ի չափ աշակերտք կը յաճախեն. կարօտաւոր ընտանեաց վերաբերեալ։ Թէ Մեսրոպեան և թէ Հռիփսիմեանց դպրոցին ծախքը՝ նմանապէս Սահակեան դպրոցին ծախքը ազգային սնտուկէն կը լինին և աշակերտք ու աշակերտուհիք ձրիաբար կընդունին իրենց ուսումնը սակայն այս վերջին դպրոցը՝ մանաւորապէս սուրբ Սահակեան ընկերութեան հոգատարութեան ներքև կը գտնուի, որ բաւական ծախք կ'նէ աշակերտաց բարեկեցութեանը և յառաջադիմութեանը համար։ Ազգային սնտուկին տարեկան եկամուտը՝ որ ըստ մեծի մասին յանշարժ ստացուածոց կգոյանայ, 3500 լիրայի չափ է, բայց տակաւին իբր 3000 լիրա պարտք ունի, որ տարուէ տարի վճարուելու վրայ է, քաղաքիս ազգային Վարչութեան բարեջան խնամօքը։

Զմիւռնիոյ Հայ ժողովուրդը ունի նաև քարաշէն հոյակապ մեծ եկեղեցի մ'՝ սուրբ Ստեփաննոսի անուամբ, և փոքրիկ եկեղեցի մի Լուսաւորչի անուամբ 'ի Հիւանդանոցն. որ բաւականապէս ընդարձակ է և քաղաքին մէջ ի Հայոց թաղն կը գտնուի։

Բաց յայսցանէ, ունիմք նաև բարեկարգ Հայ ընթերցատուն մի, ուր հիւպատոսք ու երևելի անձինք կը պատուեն երբեմն իրենց ներկայութեամբը, ունիմք Ազգասիրաց բարեջան ընկերութիւն մի, ամսական բանասիրական պատուական տետրակ մի Մամուլ Արևելեան անուն, և քաղաքական լրագիր մի, հիմնեալ յամին 1840. որ անընդհատ կը շարունակուի մինչև ցայսօր։ Այս վերջինը՝ այսինքն Արարատեան Արշալոյս, որ Հայ լրագրաց անդրանիկն է, աշխարհիս գրեթէ ամեն կողմը գտնուող Հայոց հետ կանոնաւոր յարաբերութիւններ ունենալով՝ հաղորդակցութեան բարեյաջող կապ մի կը համարուի Հնդկաստանի, Պարսկաստանի, Ռուսաստանի և բոլոր Եւրոպիոյ Հայոց ընդ Թուրքիաբնակ Հայկազունս։ Զը մոռանամք յառաջ բերելու թէ ունիմք նաև գաղղիարէն պատուական օրագիր մի, Լա Ռեֆորմ կոչուած, որոյ գլխաւոր խմբագիրն Զմիւռնացի քաջ գաղղիագէտ և ուսումնական Հայ երիտասարդ մին է, նորա պատասխանատու տընօրէնն Հայ, և նորա տպագրիչն ևս Հայ է, Դարձեալ ունիմք 3 վարպետ Հայ բժիշկներ, որ քաղաքիս ազնուական Հայ գերդաստանաց որդիք են ու օրինաւոր վկայականներ ստացած են։

Դուցէ հարկաւոր է 'ի պարագայիս յայսմիկ յաւելունել թէ ունիմք նաև Հայ մեծահարուստ վաճառականս և երևելի կալուածատէրս, որք պարծանք կը համարուին զմիւռնացի Հայոց և ընդհանուր ազգին։

Այս ամեն բարելաւութիւններն՝ գոհութիւն Աստուծոյ, ունի քաղաքիս Հայ ժողովուրդը՝ բայց բանիրուն Առաջնորդ մի, հոգևոր հովիւ մի չունի տակաւին։ Մի՛ կարծեր, սիրելի ընթերցող, թէ այս պակասութիւնն՝ զմիւռնացի Հայուն անհոգութեան արդիւնք է, ոչ, այլ Կ. Պօլսոյ ազգային Պատրիարքարանին անհոգութեան։

(Արշալոյս Արարատեան)

ՆԱՄԱԿ ՏԻՖԼԻՍԻՑ

Անցեալ նամակումս ես ցոյց էի տալիս տեղիս համալսարանի թէ ուսանողների, թէ ուսանողուհիների ընդհանուր թիւը։ Վերջինները թւով 110 են։ Հետաքրքիր է իմանալ ինչպէս են բաժանված նրանք ուսանելի առարկաներին համեմատ։ Համալսարանը ունի չորս բաժին՝ աստուածաբանական, իրաւաբանական փիլիսոփայական և բժշկական։ Ի հարկէ առաջին բաժնման մէջ չը կան կանայք. իրաւաբանականի մէջ մի կին կայ, մի ռուս Խարկովից, փիլիսոփայականումը 28 են և բժշկականումը 81։

Այն զարմանալի երևոյթը, որ բոլոր կանայք մեծ մասամբ գումարված են մի բաժնում, մեկնվում է նորանով, որ առաջինները այդ ուղղութեամբ ընթանալով, կարողացան իրանց համար ճանապարհ բացել։ Ինչպէս նորանք ամենքը հաւաքվեցան մի համալսարանում, որովհետև առաջին ուսանող կինը այդ համալսարանն էր մտել նոյնպէս և պարապմունքի տեսակի կողմից միացածները նրա օրինակին հետևեցին։

Բայց կարելի է արդեօք մեղադրել նորանց։ Բացի բժշկականութիւնից, ուրիշ ինչ ասպարէզ բաց է նորանց առջև։

Սակայն այժմ կայ Ցիւրիխում կանանց մի ամբողջ խումբ, որք ընտրել են իրանց համար ոչ թէ գործնական պարապմունք, այլ լոկ գիտնական։ Սորանք են այն 28 կանայք, որք փիլիսոփայական ֆակուլտէտի դասերին են հետևում։ Որքան լսած եմ, նորանք մեծ առաջադիմութիւն են անում իրանց այս պարապմունքների մէջ և նրանցից մի քանիսների գիտնական աշխատութիւնները տպագրվում են ուսումնական պարբերական հրատարակութիւնների մէջ։ Նրանցից մինը, տիկին Ֆարներ շուտով անատոմիական դահլիճում օգնականի տեղը պիտի ստանայ։ Նրա պաշտօնը կը լինի առաջնորդել ուսանողներին իրանց պարապմունքների մէջ։

Կանանցից մինը ինչպէս ասացի պարապում է իրաւաբանութեամբ։ Երևի նրա ապագան կը լինի փաստաբանութիւնը, որովհետև հազիւ թէ շուտով կարողանանք կանայք—դատաւորներ ունենալ։ Բայց մի և նոյն ժամանակ ոչ ոք չէ արգելում ընտրել և նոտարիուսական պաշտօնը։

Չեմ կարող լռութեամբ անցնել և այն չորս կանանց բուն գործնական պարապմունքների վրայ։ Բազմարվեստական դպրոցում պարապելով նոցանից երկուսը պատրաստվում են տեխնիքական քիմիքոսներ լինել, մինը մեքենագէտ և մինը ճարտարապետ (ինժեներ)։ Այդ ընտրութիւնը շատ աջող է երևում՝ լաւ ինժեներ, կամ մեքենագետ, թէև կին լինէր երբեք առանց աշխատանքի չի մնայ։ Միւս կողմից, այն մարդկերանց, որք չեն հաւատում թէ կինը ընդունակ է գործնական աշխատանքին, կարելի կը լինի ցոյց տալ մի գործարանի վրայ որ շինված է և կառավարվում է մի կնոջ ձեռքով, կամ մի երկաթուղու վրայ, որի շինութիւնը մի կին է գլուխ բերել, և այլն։ Հասարակութիւնը միշտ աւելի հեշտ կընդունէ նոր միտքը, երբ նա շօշափելի է և նիւթական։

Խօսելով նիւթականի վրայ, ես չեմ կարող չը

---

*) Թաղարն 25 փութ է.

**) Ման—թունգի։

յիշել այդտեղ այն ընդհանուր կարծիքը, որ կանայք ընկան համալսարանական պարապմունքի հետեից միայն մօդային (նորաձեւութեան ըղձանքներին) ենթարկվելով։ Բաւական է մի հայեացք ձգել նրանց ընտրած պարապմունքների ճիւղերի վրա, որ համոզվենք թէ շարժառիթները անգործունէութիւնը և մօդա չեն։ Կանանց թիւը այստեղ 110 է և բազմարվեստեան դպրոցում 4, ուրեմն 114։ Նրանցից գործնական պարապմունքներին, որք ուսման ընթացքը աւարտելուց յետոյ միջոց են տալիս հաց վաստակելու (ինչպէս բժշկականութիւնը, իրաւաբանութիւնը, արվեստագիտութիւնը) հետեւում են 86, այսինքն ընդհանուր թուի մեծ առաւելութիւնը։ Մնացած 28-ից որք ընդհանրապէս գիտութիւններ են ուսանում մեծ մասը նոյնպէս պատրաստվում է գործնական պարապմունքին, այն է մանկավարժութեանը։

Արդեօք նշոյլ կայ մօդայի, նորաձեւութեան յափշտակութեանը։ Աւելի հասարակ և հասկանալի չի լինի, եթէ ասենք թէ կանայք հասկացել են, որ հարկաւոր է իր անձնական աշխատանքով իրան ապահովելու և ուստի պիտի ընտրել այնպիսի պարապմունք, որ տալիս է անկախութեամբ վաստակած մի կտոր հաց։ Ապագան ի հարկէ (և մօտիկ ապագան) ցոյց կը տայ, որքան արդար են նրանք, որք այդ աչքով են նայում գործի վրա։ Կանանց մեծ մասը մտել են համալսարան 1870, 71 և 72 թուերին և որովհետև ուսման ընթացք բժշկական բաժնում տեւում է 5 տարի, ուստի մենք կը տեսնենք 75, 76 և այլն թուերին ուսում աւարտած կանանց մեծ բազմութիւնը։ Նոյն ժամանակին կաւարտեն և Բազմարվեստեան դըպրոցում ուսում առնողները։ Կենդանի մնացողը կը տեսնի. . .

Ես կամենում էի ներկայ նամակումս խօսել այստեղ ուսում առնող Կովկասից եկած հայ և վրաց ուսանողների և ուսանողուհիների մասին ընդհանրապէս, բայց ստիպվում եմ խօսքս յետ գցել հետեւեալ նամակին։

Գ. Իզմ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ուրմի քաղաքից գրում են, թէ Քուրդիստանի Թար—Գաւար կոչուած նահանգի քրդերը ապստամբել են Պարսից տէրութեան դէմ։ Քրդերը այստեղ կառավարվում էին իւրեանց բէկերով և ամէն տարի մի որոշեալ տուրք վճարում էին Պարսիկներին։ Այժմ ոչ միայն ուզում են այդ տուրքից ազատուել, այլ և կամենում են ունենալ կատարեալ անկախութիւն։ Պարսից զօրապետ Արտաշիր խանը գնացել է նուաճել ապստամբներին։ Քրդերի քաջ տղամարդերից մինչև 80 հոգի սպանուել են, պատերազմի դաշտումը։ Պարսից սարվազները մի քանի գիւղօրայք այրել են, տաւար և ոչխար, ձիանք, կողոպտել են, և շատ քուրդ ընտանիքներ գերի են բռնած։ Պարսից կողմից սպանուածների թիւը նոյնպէս սակաւ չէ։

Ապստամբութիւնը տակաւին դադարած չէ։ Նորա գլխաւորներն են Սուլթանիօ կոչուած բէկի որդիքը, որք մինչև հազար հոգի քաջ պատերազմողների հետ ամրացել են մի անառիկ բերդում։ Այդ բէկերի հայրը—Սուլթանիօն, մօտ տասն և վեց տարի յառաջ, մի այդպիսի ապստամբութեան մէջ, անհնարին քաջասրտութեամբ մտաւ այժմեան պարսից զօրապետ Արտաշիր խանի հօր եղբօր Ասկար-խան գեներալի վրանը և սպանեց նորան, իսկ բանակի միջից փախչելու միջոցին ինքն նոյնպէս սպանուեցաւ Ասկար-խանի ծառաներից։

—„Avenir National“ փարիզեան լրագիրը հաղորդում է, որ բոլորովին սուտ է այն լուրը, որ Բազէնը շուտով պէտք է ազատվի բանտարկութիւնից։ Թիէրի համակրութիւնը Բազէնին, ամէնքին յայտնի է, բայց նա վախենում է, հասարակական կարծիքի դատապարտութիւնից։ Բազէնը անպատճառ կենթարկուի դատաստանի, երբ գերմանացոց զօրքերը բոլորովին կը հեռանան Ֆրանսիայից։

—Մարտի 20-ն ստացած հեռագրալուրը իմաց է անում Նիւ-Եօրկից, որ „Atlantic“ շոգենաւը, ենթարկուեցաւ զարհուրելի փոթորկի «Մարսալա» անունով կղզու մօտերքում, խեղդուեցան 700 մարդ։

—Աւստրիացոց կայսրը ուղարկեց հրաւէր բոլոր թագաւորներին, նոյնպէս և Ֆրանսիացոց հասարակապետութեան նախագահ Թիէրին, որ ներկայ գտնվեն «Վիէննայի համաշխարհական հանդիսում»։

—Իսպանիայից եկած լուրերը հաղորդում են, որ կարլոսեանք, մի քանի տեղերում յաղթութիւն ունեցան պատերազմի մէջ։ Բէրգ քաղաքում կարլոսեանք 500 հոգի գերի տարան կառավարութեան զօրքերից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Փորձ» առաջին տետրակի մէջ կարդում ենք. ուսումնական համազգին մեր Մկրտիչ Բէրօեանցն, որ մի քանի տարի առաջ հայոց գրականութեան ուսուցչապետ էր պետերբուրգեան համալսարանում, և վերջին տարիներում հայոց լեզուի գրաքննիչ Ս. Պետերբուրգում, վախճանեցաւ անցեալ 1872 թւին իւր հայրենիքում՝ Աժտարխանի մէջ։ Հանգուցեալը թողել է մի ընդարձակ ձեռագիր աշխատութիւն՝ բառարան ռուսերէնից ի հայոց լեզու։

⁂

Շամախուց հաղորդում է մեզ պ. Ա. Մէլիք Շահնազարեանցը, թէ ճարտարապետ պ. Բօտրովը, պարապուելով այդ քաղաքի երկրաշարժութեան պատճառների քննութեամբ, յայտնել է որ այդ երեւոյթի պատճառն է գետնի տակ ժողովուած ածխաջրային ծծմբաջրային գազերի ամբարուիլը, որք ազատ մուտք չը գտանելով, պատճառում են ստորերկրեայ պատառումներ և հետևապէս երկրաշարժ, որոնք հեռացնելու, գոնեա թեթեւացնելու համար, պ. Բօտրովը մտածել է բաց անել հորեր և ծակեր, որպէս զի գազերը կարողանային ազատ ելք գտնել։ Այդ միտքը իրագործելու համար կառավարութիւնը տուել է ճարտարապետին հինգ դեսեատին քաղաքապատկան հող։

⁂

Գ. . . .ից գրում են, քաղաքիս երկու քահանաները, շատ պատճառներ (?) գտնելով, մինը մօտ ժամանակներս գիւղն է գնում, միւսը՝ նորա ջիգրուց գնում է մի այլ տեղ։ Այդ միջոցին պատահում է մի ննջեցեալ, խղճալու դիակը քահանայ չը գտնվելու պատճառաւ մինչև եօթն օր իւր տան մէջ է մնում, իսկ եկեղեցում, այդ մեծ պասի ապաշխարութեան օրերում մինչև տասն օր ժամասացութիւնը դադարում է։

⁂

Ղուբայ'ց գրում են 15 օր է շարունակ ձիւնախառն անձրև է գալիս, ուտելիքների գները օր ըստ օրէ բղնում են։ Ցորենը ծախվում է փութը 90 կոպ., ալիւրն 1 րուբլ 10 կոպ. գարին մինչև 45 կոպ. բրինձը 1 րուբլ 60 կոպ.

⁂

Թաւրիզուց գրում են, թէ բարեկենդանների առիթով տեղային հայ երիտասարդները մի քանի անգամ ունեցել են ընտանեկան դիմակաւոր պարահանդէս (մասկարադնի բալ)։ Մօլլաների դասը սաստիկ գրգռուել է դորանից, երբ լսել են, թէ հանդէսի մէջ յայտնուած են եղել և մի քանի դիմակաւորք մօլլայի հագուստով։ Այդ անցքը յայտնվում է քաղաքապետին, որը շուտով արգելք է դնում այդպիսի համարձակութիւններին։

⁂

Ալէքսանդրապօլուց գրում են, տեղային Յաջորդ Հ. Սուքիաս վար. Պարզեանցը մտադիր է հիմնել մի ընթերցարան հոգեւորական դասի համար, որը շուտով իրագործուելու վերայ է։

⁂

Նոյն քաղաքից գրում են, թէ Ալէքսանդրապօլու երիտասարդութիւնը աշխատում է հիմնել մի հաստատուն թատրոն։ Այդ ձեռնարկութեան գլխաւորներն են պ. պ. Աւետիք Բաքսյեանցը և Աւետիք Նալեանցը։

⁂

Մեզ ասում են որ Շիլլերի «Աւազակներ» դրամայի երեք գործողութիւնը բոլորովին պատրաստ է։ Որքան լսում ենք մի քանի նշանաւոր դերերը բաժանված են այսպէս «ծերունի Ֆօն-Մօօր—Զարդիշեանց. կարլ-Ֆօն-Մօօր—Ջմշկեան. Ֆրանց-Ֆօն-Մօօր—Ամիրիկեան. Ամալիայ—Տիկին Սաթենիկ։ Ցաւում ենք, որ դերերի այս օրինակ բաժանումը կը նպաստի գրուածի յաջողութեանը մեր բեմի վերայ։ Մի և նոյն պիեսայի մէջ Շվէյցերի դերը կը կատարի պ. Աւալեանցը։ Ասում են որ լաւ է կատարում։ Իսկ Շպիգելբերգի և Կոսինսկու դերերը կը կատարեն երկու նոր դերասաններ. առաջինինը կը խաղայ պ. Շահբուդաղեանցը, իսկ երկրորդին (Կօսինսկուն) պ. Մամաջանեանցը։ Դերասանների կրկնութեան մէջ լինողները մեզ հաւատացնում են, որ ժամանակով այս երկու դերասանքը կարող են շատ օգտաւէտ լինել մեր բեմի համար։ Պ. Շահբուդաղեանցի համար ասում են որ «կօմիկ է»։ Իսկ պ. Մամաջանեանցը որ ունի փայլուն հասակ. զօրեղ ձայն. և պարզ դիկցիայ, այսպէս անուանուած „jeune premier“ դերերի համար իսկ և իսկ ձևած է։ Ի հարկէ, երկուսն էլ դեռ ևս անփորձ են։ Ցանկալի կը լինէր, որ պ. պ. Ջմշկեանը և Ամիրիկեանը ուշադրութիւն դարձնէին մի այդպիսի ուրախալի երեւոյթի վերայ. և ամենայն կերպիւ աշխատէին այդ երկու դերասաններին պահել խմբի մէջ. և առանձին հոգացողութիւն ունենային նրանց դերերի մշակութեան համար. . . Մենք մի այդպիսի ցանկութիւն յայտնեցինք իր ժամանակին պ. Աւալեանցի համար, իսկ փորձը ցոյց տուեց որ պ. Աւալեանցը փոքր կերպիւ չէ նպաստում խաղի ensemble-ին. . .

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԺԸՆԵՎ.—Գ. Իզմ.—խմբագրութենից անկախ պատճառներով Ձեր յօդվածը չի տպվի։

ՊԵՏՐՕՎՍԿ.—Ց. Տ. Ն.—վեց ռուբլին յանձնել ենք պ. Ա. Էնֆիաճեանցի գրաւաճառանոց որ և կուղարկի Ձեր պահանջած գրքերը։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ.—Ա. Բ. Թէ յօդվածը, թէ փողը շնորհակալութեամբ ստացած ենք։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 5-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպէրիալ)	6 ռ.	8 կ.
ԲԱՄԲԱԿԸ Երևանու	4 „	50 „
„ երկրորդ տեսակը	4 „	40 „
„ Ամերիկայի սերմից	6 „	60 „
ԲՈՒՐԴԸ Թուշի	8 „	— —
„ „ երկրորդ տեսակը	7 „	60 „
„ Թարեքեամի	4 „	— —
ՇԱՔԱՐԸ Ռափ (Բրօցկու)	7 „	60 „
„ „ միւս տեսակը	7 „	50 „
„ ղազրանիցու տրանցից	5 „	80 „
մաքուր վճարած	8 „	80 „
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռափ	6 „	50 „
ԴԱՀՎԱ Լիվանի լաւը	15 „	— —
ԴԱՀՎԱ Մօկօ, շատ լաւը	17 „	50 „
„ Մարտինիկայի, ցածրը	14 —	— „
ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը	1 „	60 „
„ „ երկրորդ տեսակը	1 „	55 „
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ	1 „	80 „
„ Շորագեալու	1 „	60 „
ԳԱՐԻՆ Երևանի	1 „	15 „
ՊՂՊԵՂԸ	12 „	— —
ՇԻՐԲԱԽՏԻ ձէթ	9 „	70 „
ՄՈՄ	12 „	80 „

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

ՓՈԽԱՆԱԿ. բարաթ պօլս. . . վճա.	6—70
„ „ Թաւրիզում վճա.	— —
ՄԱՐՍԷԼ և Փարիզ, 100 րուբլին աժէ	— —
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդէսայի կուրսը) 7 րուբլի 34½ կոպէկը աժէ	1 լիրա.
ՄԱՐՍԷԼՈՒՄ բամբակի 50 քիլօ (3 փութ 2 գրվ.) ծախվում է	73 ֆրանկ.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվում է	92 ֆր.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Թուշի սպիտակ բուրդը ծախվում է	105 ֆր.
„ գառան բուրդը աժէ	— —
„ Թարաք. բուրդը աժէ	75 ֆր.
„ Ղարաբ. բուրդը աժէ	60—63 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաւիրում եմ սորանով բոլոր մեծ. հայկական պարոններին օգնական լինելու իւրեանց դրամական ձեռնտուութենով „Մեծ մարդերի պատմութիւններ“ վերնագրով Թարգմանական աշխատութեան տպագրութեան։ Գինն է 1 ռուբլի։ Իւրաքանչիւր ստորագրող կը ստանայ, եթէ կը բարեհաճէ, այնքան օրինակ, որքան ռուբլի կը վճարէր յառաջուց։

Այդ գործի տպագրութեան օգնել ցանկացողին խնդրում եմ խոնարհաբար ստորագրել ստորագրական թերթերից մինի վերայ, որոնք գտնվում են „Մշակի“ խմբագրատան մէջ, Բերենշտամի և Ալաղաթեանի գրադարաններում, այլ և պ. Տատուրեանի լամպային մագազինում։ Ցաւեցնում եմ. միթէ հայկական հոգեւորականութենից չը պիտի յուսամ մասնակցութիւն լուսաւորութեան գործում. .

Գ. Տէր-Մելքսեդեկեան։

Նախապատրաստում է զինուորական, եունկերների (юнкерскія) դպրոցներ մտնելոյ, նմանապէս զինուորական գիմնազիայի և պրօգիմնազիայի բոլոր դասատուններ մտնելոյ ցանկացողները կարող են իմանալ հասցէն Սուլեկօվի մագազինումը, Գոլովինսկի պրօսպէկտի վրա։ 2 (2)

Մենք ստացանք հետեւեալ ծանուցումը Թիֆլիսի Բարեգործական Ընկերութեան կողմից։

Թիֆլիսի բնակիչներին լաւ յայտնի է, որ քաղաքիս Բարեգործական Ընկերութեան գլխաւոր նպատակներից մինն է ձրիաբար դաստիարակութիւն եւ կրթութիւն ամենաչքաւոր դասի երեխաների, և որ միջոցները այդ նպատակին հասնելու համար, միշտ չեն նպաստում ընկերութեան ձգտումների իրագործմանը, կախված լինելով նրանցից անհրաժան պատահական հանգամանքներից։ Այդ տեսակ միջոցները մինչև ցայժմ բարերար անդամների դրամական տուրք էին և զանազան վիճակախաղներից պարահանդէսներից, ներկայացումներից, կօնցէրտներից արդիւնքը։

Այժմ կամենալով հաստատել բոլոր կարելոյն հաստատ և միակերպ մուտք կամաւոր նուէրների, ընկերութեան նիւթական միջոցները աճեցնելու, և նրա գործունէութիւնը հաստատ սկիզբների վրա հիմնելու համար, ընկերութիւնը մտադրած է՝ կայսրութեան միւս նշանաւոր քաղաքների օրինակով, Թիֆլիսի մէջ էլ մտցնել „կօպէկանոց նուիրատուութիւնը, որի նպատակով ընկերութեան անդամները յայտնի ժամանակին առանձին տուփերով (կրուժկի) Քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովից ընտրված անձերի մասնակցութեամբ, պիտի մտնեն ամեն մի տուն, խնդրելով յանուն անօգնական որբերի նուիրել մի կօպէկ բարի գործի համար։

Յայտնելով սորա մասին հասարակութեանը, բարեգործական ընկերութիւնը յուսով է, որ Թիֆլիսի բնակիչները, իրանց յատուկ համակրութեամբ, դէպի բարեգործութիւնը արձագանք կը տան նրա այդ հրաւէրքին, յիշելով որ տուողի ձեռքը չի աղքատանայ և որ ամեն տուրք բարի է և ամէն պարգև կատարեալ։

„АГЕНТСТВО ДВИГАТЕЛЬ“

„Դվիգատէլ“ անվանված գործակատարութիւն, ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված ցամաքի, գետերի և ծովի վրա ապահովութեան և բեռներ տեղափոխվելու ընկերութիւնը, ընդունում է ամեն տեսակ բեռներ և ապրանք թէ Ռուսաստան թէ Արտասահման ուղարկելու և նոյնպէս փոխ է տալիս նրանց գրաւականով գումարներ։

Կօնտօրան (գրասենեակը) գտնվում է Սօլօլակում, Խառիսօվի տան, և Թուրքի մէյդանի վրա Շադինովի քարվանսրայում։

Նոյն տեղ գտնվում է և Ռուսաց 2-րդ կրակի դէմ ապահովութեան ընկերութեան բաժանումն որ ապահովում է թէ շարժական թէ անշարժ կայքեր, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և Անդրկովկասի այլ քաղաքներում։

Գործակատար Պէպինով.

Պատիւ ունեմ ծանուցանել որ ես մասնաւորապէս ծանօթ լինելով „Ջելցերսկի ջուր և Լիմօնաթ գազես“ շինելու կերպերին և նորա ապպարատների գործադրութեանն, որն որ ես անձամբ երկար ժամանակ այդ տեսակ գործարաններու մէջ պատրաստել սովորելով կ'պարապէի, վասն որոյ և այդ տեսակ գործարանների բերած օգուտը և շահը աչքի առաջ ունենալով, որն որ և մի մեծ գումարի կարօտութիւն չունի նորա սկսման համար հարկաւ առարկայքը պատրաստելու կփութամ առաջարկել սոյն իմ դիտաւորութիւնս և կ'հրաւիրեմ գործունեայ անձանց ուշադրութիւնը որոնք որ կը կամենան մասնակից լինել մի ընկերութիւն հաստատելու համար Գանձակի մէջ Զելցերսկի ջրոյ գործարան բացել որոյ հիմնադրութեան համար հարկաւոր եղած գործիքներ բերել տալը, պատրաստելը և միով բանիւ ամենայն հոգսերը կարգաւորելու պարտքը բոլորովին իմ վերաս եմ առնում. ցանկացողք սոյն իմ բարենպատակ առաջարկութեանս թող բարեհաճեն օրով առաջ իւրեանց կամքը յայտնել։

Գօստինիցա „Կավկազ“ № 29։—Թիֆլիս

Մկրտիչ Միհրանեանց

Дозволено Цензурою. Тифлисъ, 5. Апрѣля 1873 г.
Ծէրէթէլի և ընկ. (Նախկին Դուբէլիրի) տպարան
Խմբագիր—Հրատարակող Գրիգոր Արծրունի